

Ականատեսների ստորագրութեամբ իսկոյն և եթ դատախազին խնդիր է արւում՝ քննութիւն նշանակել և յանցաւորներին դատի ենթարկել: Նոյն օրը երեկոյեան փողոցներում պատերին կպցնում են նահանգապետի մի ծանուցագիրը. որով ազդարարւում է քաղաքի բնակչութեանը, թէ ամեն մի ժողով կամ ցոյց փողոցներում արգելուած է: Բնակիչները պէտք է զգոյշ լինեն, կարգը չը խանգարեն նաև թոյլ չը տան իրանց որդկերանց փողոց դուրս գալ: Հակառակ դէպքում նահանգապետը յայտնում է, թէ գործ կը դրուին խիստ ոստիկանական միջոցներ...

Գիմնազիօնում և ուսանողական դպրոցում պարապմունքները ընդհատուած են մինչև մարտի 7-ը: Թէ ինչ կը լինի այսուհետև—ոչ ոք չը գիտէ:

Նոյն օրը տեղական հասարակական ժողովարանի անդամները 100-ից աւելի ստորագրութեամբ յայտարարութիւն են տալիս, որ ժողովարանի անդամները շաբթից դուրս բերուին ոստիկանապետ Ջարինը և ոստիկանական պաշտօնեաներ Վէյլ-կէն, Մակարևիչը, Պուզանօվն և Բօլկօվը, որոնք անպաշտպան երեխաններին ծնծելով են ցոյց տուել իրանց քաջութիւնը...

Ահա բաւական ժամանակ է, որ Կովկասի մի ամբողջ վայրից գալիս են տխուր լուրեր, թէ երկրի ազդաբնակութիւնը յուզուած է: Մեր խօսքը Գուրիայի մասին է, որի ազդաբնակութեան թիւը հասնում է 100 հազարի: Լրջագրները, հարկադրուած, շատ քիչ մանրամասութիւններ են հաղորդում այդ երկրի յուզման մասին, իսկ մասնաւոր լուրերը հակասում են միմեանց: Միայն պաշտօնական «Кавказ»-ը տուեց մի քանի տեղեկութիւններ, որոնցից մենք իմացանք, թէ Գուրիացիների շարժումը վերջերս սկսել է քաղաքական բնաւորութիւն ստանալ:

Շարժման առաջն առնելու համար երկրիս կառավարչապետի պաշտօնակատար գեներալ Մալաման փետրուարի սկզբին ուղարկեց Գուրիայ գեներալ Ալիխանօվին զօրքով, յանձնելով նրան երկրի և՛ քաղաքացիական իշխանութիւնը ժամանակաւոր: Այս միջոցը հասարակութեան կողմից համարուեց խիստ և ոչ ցանկալի: Նորին գերագնացութիւն գնն. Մալամային ներկայացաւ մի առանձին պատգամաւորութիւն Թիֆլիսի նահանգի ազնուականութեան պարագլուխ իշխան Մելիքովի առաջնորդութեամբ և խնդրեց, որ նախ քան խիստ միջոցների դիմելը, գուրիացիների դրութիւնը քննուի: Այս նպատակով

առաջարկուեց Գուրիայ ուղարկել կառավարչապետի գլխամասում խորհրդի անդամ Սուլթան-Կրիմ-Գիրէյի, իբրև մեր երկրի վիճակին ծանօթ անձի, որ տեղն ու տեղը ծանօթանայ գաւրիացիների պահանջներին:

Գին. Մալաման սիրով ընդունեց այս խելացի առաջարկութիւնը: Այժմ Սուլթան-Կրիմ-Գիրէյն, ինչպէս հաղորդում են տեղական լրագրները, մեծ աջողութեամբ կատարում է իր վրայ դրուած միսսիան: Մինչև այժմ արդէն պարզուել է, որ գուրիացիների ընդհանուր շարժումը և նրանից առաջացած մասնաւոր սպանութիւնները, որ այնքան յաճախ են կրկնուում, չեն կրում բուն քաղաքական բնաւորութիւն, այլ ուղղակի տնտեսական անել վիճակի հետեանք են: Թշուառ գուրիացիները ներկայումս գտնուում են տնտեսական ամենաթշուառ դրութեան մէջ: Բաւական է ասել, որ իւրաքանչիւր հոգի գուրիացի հազիւ ունի միջին թուով մի դեսևատին վարելահող, այն էլ ոչ այնքան պարարտ: Երկրի կալուածատէրերը վարւում են նրանց հետ անբարեխիղճ, հարստահարւում են, զրկում, գրեթէ կողոպտում: Տեղական ստորին պաշտօնեաները ծծում են ժողովրդի արիւնը՝ իրանց կաշառակերութեամբ, ծեծում են գիւղացիներին, բանտարկում ամեն մի չնչին բանի համար, տուգանքի ենթարկում և այլն: Պակաս փորձանք չէ խեղճ գուրիացիների համար և հոգեւորականութիւնը, որ անխնայ հարստահարւում է գիւղացիներին, օգտուելով իւր մի քանի արտօնութիւններից: Ժողովրդի տնտեսական դրութիւնը քայքայուել է, բարձր վարքը կոպտացել են արտաքուստ եկած հանգամանքների շնորհով, ուսումնարաններ չը կան, եղածներն էլ չեն համապատասխանում իրանց կոչմանը: Ժողովուրդը տանջւում է մեծ և անտանելի հարկերի տակ, տուն կայ, որ ծախել է իր վերջին կովն այս կամ այն հարկը տալու համար: Այս է պատճառը Գուրիայի շարժման և ոչ թէ այժմ գաղափարը, որ վերադրում են նրան շատ չարամիտներ, այն է, թէ իբր գուրիացիք ձգտում են ղէպի ինչոր երեակայական անկախութիւն: Ոչ մի գուրիացի չունի այդպիսի ցնորք և չի կարող ունենալ:

Պէտք է յուսալ, որ Սուլթան-Կրիմ-Գիրէյի առաքելութիւնը կունենայ բարերար հետեանք թէ Գուրիայի և թէ երկրիս ընդհանուր խաղաղութեան համար: Բայց չը պէտք է կարծել, որ Գուրիան միակ վայրն է մեր երկրում այնպիսի տխուր պայմանների մէջ: Ամբողջ Կովկասի տնտեսական դրութիւնը լուրջիչ է: